

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2008 թվականի հունվարի 25-ի

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

տնտեսական ինտեգրումը խորացնելու եւ բարեխիղճ մրցակցություն իրականացնելու նպատակով,

առաջնորդվելով միջազգային առետրի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերով եւ կանոններով,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

1. Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածքում Կողմերը կիրառում են միասնական մաքսային սակագին:

2. Միասնական մաքսային սակագինը Մաքսային միության առետրային քաղաքականության գործիքն է:

3. Միասնական մաքսային սակագնի հիմնական նպատակներն են՝

- 1) Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք ապրանքների ներմուծման ապրանքային կառուցվածքի ռացիոնալացումը,
- 2) Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածքում ապրանքների արտահանման եւ ներմուծման ռացիոնալ հարաբերակցության պահպանումը,
- 3) Մաքսային միությունում ապրանքների արտադրության եւ սպառման կառուցվածքում պրոգրեսիվ փոփոխությունների համար պայմանների ստեղծումը,
- 4) Մաքսային միության տնտեսության պաշտպանությունը օտարերկրյա մրցակցության

անբարենպաստ ազդեցությունից

- 5) համաշխարհային տնտեսությանը մաքսային միության արդյունավետ ինտեգրման համար պայմանների ապահովումը:

Հոդված 2

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«միասնական մաքսային սակագնի հիմնական ցանկ» նշանակում է ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի ամբողջական ցանկ, որոնց չափերի վերաբերյալ միասնական մաքսային սակագնի շրջանակներում Կողմերը համաձայնության են եկել,

«ներմուծման մաքսատուրք» նշանակում է պարտադիր վճարում, որը գանձվում է մաքսային մարմինների կողմից Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք ապրանք ներմուծելիս,

«քվոտայից դուրս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ» նշանակում է ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ, որը սահմանվում է այն ապրանքների համար, որոնք ներմուծվում են սահմանված մաքսային քվոտայից ավելի քանակով,

«քվոտայի շրջանակներում ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ» նշանակում է ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ, որը սահմանվում է այն ապրանքների համար , որոնք ներմուծվում են սահմանված սակագնային քվոտայի շրջանակներում,

«միասնական մաքսային սակագին»՝ մաքսատուրքերի դրույքաչափերի ամբողջական ցանկ, որը կիրառվում է երրորդ երկրներից միասնական մաքսային տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ՝ համակարգված Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի համաձայն,

«միասնական ԱՏԳ ՄԱԱ» նշանակում է Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ, որի համար հիմք է եղել Համաշխարհային մաքսային կազմակերպության ապրանքների նկարագրման եւ կոդավորման ներդաշնակեցված համակարգը,

«ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ» նշանակում է ներմուծման մաքսատուրքի չափ (մեծություն),

«մաքսային սակագին» նշանակում է ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի ամբողջական ցանկ, որը կիրառվում է Կողմ հանդիսացող պետություններում՝ նախքան միասնական մաքսային սակագին սահմանելը,

«մաքսային քվոտա»՝ Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք առանձին ապրանքատեսակների ներմուծումը կարգավորող միջոց, որով նախատեսվում է սահմանված որոշակի ժամանակահատվածում կիրառել ներմուծման մաքսատուրքի ավելի ցածր դրույքաչափեր՝ սահմանված քանակությամբ ապրանք ներմուծելու դեպքում (բնամթերային կամ դրամական արտահայտությամբ) եւ ներմուծման ավելի բարձր դրույքաչափ՝ այդ քանակից ավելի ապրանք ներմուծելու դեպքում:

Հոդված 3

1. Միասնական մաքսային սակագնի շրջանակներում կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի հետեւյալ տեսակները՝

- 1) արժեքային (ադվալորային), որը հարկվող ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ հաշվարկվում է տոկոսներով,
- 2) յուրահատուկ, որը հաշվարկվում է հարկվող ապրանքների միավորի համար,
- 3) խառը, որը համադրում է երկու մեթոդներն էլ, որոնք նշված են սույն կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերում:

2. Միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը համարվում են միասնական եւ ենթակա չեն փոփոխման՝ կախված մաքսային սահմանով ապրանք տեղափոխող անձանցից, գործարքների տեսակներից եւ այլ հանգամանքներից՝ բացառությամբ սույն Համաձայնագրով սահմանված դեպքերի:

3. Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք ապրանքների ներմուծման օպերատիվ կարգավորման նպատակով՝ անհրաժեշտության դեպքում կիրառվող ներմուծման մաքսատուրքերի փոխարեն կարող են սահմանվել սեզոնային մաքսատուրքեր, որոնց գործողության ժամկետը չի կարող գերազանցել տարեկան 6 ամիսը:

Հոդված 4

1. Միասնական մաքսային սակագնի ձեւավորումն իրականացնում են Կողմերը՝ հաշվի առնելով հետեւյալ գործոնները՝

- 1) մաքսային սակագների միասնականացման մակարդակը, որի շուրջ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «Մաքսային միության մասնակից պետությունների ընդհանուր մաքսային սակագնի մասին» 2000 թվականի փետրվարի 17-ի համաձայնագրի իրականացման ընթացքում,
- 2) որոշակի ապրանքի ներմուծումը Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածք,
- 3) ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի «զգայունությունը»՝ արդյունաբերության որոշակի ճյուղերի համար,
- 4) Կողմերի միջազգային պարտավորությունները:

2. Կողմերը համաձայնեցնում են Միասնական մաքսային սակագնի ձեւավորման սկզբունքները եւ կարգը՝ ներառյալ ժամկետները, փուլերը, միասնական մաքսային սակագնի ձեւավորման ժամանակահատվածում ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի փոփոխման վերաբերյալ որոշումները համաձայնեցնելու Կողմերի պարտավորությունները, մաքսային քվոտաների կիրառման պայմանները եւ մեխանիզմը:

3. Կողմերը, որպես կանոն, միակողմանիորեն չեն փոփոխում ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը, որոնք նախատեսված են միասնական մաքսային սակագնի հիմնական ցանկում:

4. Կողմերը, ոչ , քան եռամսյակը մեկ անգամ, բանակցություններ են վարում ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը համաձայնեցնելու վերաբերյալ՝ միասնական մաքսային սակագին ձեւավորելու նպատակով:

Բանակցությունների արդյունքները ձեւակերպվում են արձանագրություններում, որոնք ուղարկվում են Մաքսային միության հանձնաժողով, որը հիմնադրվել է «Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի համաձայն (այսուհետ՝ Հանձնաժողով):

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված արձանագրությունների հիման վրա՝ բոլոր Կողմերի համաձայնության դեպքում, Հանձնաժողովը ձեւավորում է միասնական մաքսային սակագնի հիմնական ցանկը, կամ փոփոխում է միասնական մաքսային սակագնի հիմնական ցանկում

ներառված ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը:

6. Միասնական մաքսային սակագինը համարվում է ձեւավորված, եթե Կողմերի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը համընկնում են ապրանքների ամբողջ անվանացանկում: Կողմերը միայն բացառիկ դեպքերում են համաձայնեցնում Կողմերից մեկի կողմից ավելի բարձր կամ ավելի ցածր ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի կիրառման պայմանները եւ կարգը:

Հոդված 5

1. Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք ապրանքներ ներմուծելիս կարող են կիրառվել սակագնային արտոնություններ՝ ազատելով ներմուծման մաքսատուրքից կամ իջեցնելով ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը:

2. Սակագնային արտոնությունները չեն կարող անհատական բնույթ կրել:

3. Սակագնային արտոնությունների տրամադրումը թույլատրելի է այն ապրանքների համար, որոնք՝

- 1) ներմուծվում են մաքսային օրենսդրությամբ սահմանված համապատասխան մաքսային ռեժիմի շրջանակներում՝ մաքսային վերահսկողության ներքո,
- 2) ներմուծվում են որպես օտարերկրյա հիմնադրի ներդրում կանոնադրական (պահուստային) կապիտալում՝ այդ կապիտալի ձեւավորման համար հիմնադիր փաստաթղթերում սահմանված ժամկետների սահմաններում,
- 3) ներմուծվում են տիեզերական տարածքի հետազոտման եւ օգտագործման բնագավառում Կողմ հանդիսացող պետությունների միջազգային համագործակցության շրջանակներում, ինչպես նաեւ տիեզերական սարքավորումները տիեզերք բաց թողնելու ծառայությունների մասին համաձայնագրերի շրջանակներում
Հանձնաժողովի կողմից հաստատվող ցանկի համաձայն:

Հոդված 6

1. Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք երրորդ երկրներից ներմուծման դեպքում, ներմուծման մաքսատուրքից ազատվում են՝

- 1) այն տրանսպորտային միջոցները, որոնք իրականացնում են միջազգային բեռնափոխադրումներ, տեղափոխում են ուղեբեռներ եւ ուղեւորներ, ինչպես նաեւ նյութատեխնիկական ապահովման ու զինման պարագաներ, վառելիք, պարենամթերք եւ այլ գույք, որը փոխադրում իրականացնելիս անհրաժեշտ է տրանսպորտային միջոցների բնականոն շահագործման համար, միջանկյալ կանգառներում կամ այդ տրանսպորտային միջոցների վթարների (անսարքությունների) վերացման հետ կապված՝ արտասահմանում ձեռք բերված այլ գույք.
- 2) Կողմ հանդիսացող պետություններին պատկանող ջրային փոխադրամիջոցների ծովային արդյունագործության արտադրանքը, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետությունների իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից վարձակալված (նավավարձված) ծովային փոխադրամիջոցների ծովային արդյունագործության արտադրանքը.
- 3) պաշտոնական կամ անձնական օգտագործման ապրանքները, որոնք ներմուծվում են երրորդ երկրների ներկայացուցիչների, ֆիզիկական անձանց կողմից, որոնք հիմնվելով Կողմ հանդիսացող պետությունների միջազգային պայմանագրերի կամ իրենց օրենսդրությունների վրա, ունեն առանց տուրքի նման առարկաներ ներմուծելու իրավունք.
- 4) Կողմ հանդիսացող պետությունների արժույթը, երրորդ երկրների արժույթը (բացառությամբ դրամագիտական նպատակներով օգտագործվող արժույթի), ինչպես նաեւ արժեթղթերը՝ Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության համաձայն.
- 5) որպես մարդասիրական օգնություն ներմուծվող ապրանքները եւ (կամ) այն ապրանքները, որոնք ներմուծվում են վթարի եւ աղետների, բնական աղետների հետեւանքները վերացնելու նպատակով.
- 6) ապրանքները՝ բացի ենթակցիզային (բացառությամբ ուղեւորատար մեքենաների, որոնք հատուկ նախատեսված են բժշկական նպատակներով) ապրանքներից, որոնք ներմուծվում են որպես անհատույց օգնություն (աջակցություն), ինչպես նաեւ երրորդ երկրների, միջազգային կազմակերպությունների, կառավարությունների գծով բարեգործական նպատակներով ներմուծված ապրանքները, այդ թվում՝ տեխնիկական օգնություն (աջակցություն) ցուցաբերելու համար.
- 7) մաքսային կարգավորման ոլորտին վերաբերող իրավական ակտերով սահմանված եւ

ներմուծման մաքսատուրքերից ազատում նախատեսող մաքսային ռեժիմների շրջանակներում ներմուծվող ապրանքները.

8) ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքները՝ բացառությամբ ներմուծման համար արգելված ապրանքների, որոնք նախատեսված չեն արտադրության կամ այլ ձեռնարկատիրական գործունեության համար՝ մաքսային կարգավորման ոլորտին վերաբերող իրավական ակտերի համաձայն.

9) Կողմ հանդիսացող պետությունների սեփականություն դառնալու ենթակա ապրանքները՝ այդ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

2. Կողմերն այլ դեպքերում սակագնային արտոնությունների տրամադրման, դրանց միասնականացման կամ միակողմանիորեն կիրառելու վերաբերյալ լրացուցիչ պայմանավորվածություն ձեռք կբերեն:

3. Մաքսատուրքերից ազատման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

Հոդված 7

1. Մաքսային միության սակագնային արտոնությունների միասնական համակարգը կիրառվում է զարգացող եւ առավել քիչ զարգացած երկրների տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով:

2. Մաքսային միության սակագնային արտոնությունների միասնական համակարգից օգտվող երկրների ցանկը եւ զարգացող ու առավել քիչ զարգացած երկրների ծագում ունեցող ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք ապրանքներ ներմուծելիս կիրառվում են սակագնային արտոնություններ, որոշվում են Հանձնաժողովի կողմից:

3. Մաքսային միության սակագնային արտոնությունների միասնական համակարգից օգտվող զարգացող երկրների ծագում ունեցող ապրանքների եւ Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք ներմուծվող՝ սույն հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքների ցանկում ներառված ապրանքների նկատմամբ կիրառվում են միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի 75 տոկոսի չափով ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր

4. Մաքսային միության միասնական սակագնային արտոնությունների համակարգից

օգտվող առավել քիչ զարգացած երկրների ծագում ունեցող եւ Կողմ հանդիսացող պետությունների միասնական մաքսային տարածք ներմուծվող ու սույն հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքների ցանկում ընդգրկված ապրանքների նկատմամբ կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի զրոյական դրույքաչափեր:

Հոդված 8

1. Կողմերի կողմից միասնական մաքսային սակագնի կիրառման լիազորությունները տրամադրելու ամսաթվից Հանձնաժողովը՝

- 1) իրականացնում է միասնական ԱՏԳ ՄԱԱ-ի կիրառում
- 2) սահմանում է ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր (այդ թվում՝ սեզոնային),
- 3) ներմուծում է սակագնային քվոտաներ եւ սահմանում է դրանց բաշխման կարգը,
- 4) սահմանում է մաքսային արտոնությունների միասնական համակարգը, այդ թվում՝
 - ա) Մաքսային միության արտոնությունների միասնական համակարգից օգտվող՝ զարգացող երկրների ցանկը,
 - բ) Մաքսային միության արտոնությունների միասնական համակարգից օգտվող՝ առավել քիչ զարգացած երկրների ցանկը,
 - գ) զարգացող երկրներից եւ առավել քիչ զարգացած երկրների ծագում ունեցող ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծելիս տրամադրվում են միասնական սակագնային արտոնություններ,
- 5) սահմանում է սակագնային արտոնությունների կիրառման կարգը, որոնք նշված են սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում:

2. Հանձնաժողովը մաքսասակագնային կարգավորման մասին որոշումներն ընդունում է ձայների երկու երրորդի մեծամասնությամբ: Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում «Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի 8-րդ հոդվածում սահմանված կարգով եւ գործում են այնքան ժամանակ, քանի դեռ Հանձնաժողովը կամ Մաքսային միության որեւէ այլ վերադաս մարմին չի ընդունում այլ որոշում:

3. Ինչ վերաբերում է «զգայուն» ապրանքներին, որոնց ցանկը հաստատվում է Մաքսային

միության բարձրագույն մարմնի կողմից, ապա այդ առնչությամբ Հանձնաժողովը որոշումն ընդունում է կոնսենսուսով:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վեճերը կարգավորվում են Կողմերի միջև խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, փոխանցվում են Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 10

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրանից դուրս գալու եւ դրան միանալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2008 թվականի հունվարի 25-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեում, որը, լինելով սույն Համաձայնագրի ավանդապահը, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

(ստորագրություններ)